ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1222 - Ա

ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շահառուների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույք ձեռք բերելու նպատակով «Հայբիզնեսբանկ» (իրավահաջորդը՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ») փակ բաժնետիրական ընկերության միջոցով ծրագրի շահառուներին տրամադրված հիփոթեքային վարկերի ամսական մարումները (մայր գումար և տոկոսագումար) իրականացվելու են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով՝ սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված վճարման ժամանակացույցերին համապատասխան, եթե հիփոթեքային վարկի գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի բոլոր սեփականատերերը (համասեփականատերերը) ձեռք են բերել Հայաստանի

Հանրապետության քաղաքացիություն: Նկատի ունենալ, որ սույն որոշման ընդունման պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անդամով ընտանիքների համար հիփոթեքային վարկերի մարման գործընթացը կմեկնարկի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելուց հետո՝ հաջորդ ամսվա 20-ից.

2) «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով ծրագրի շահառուներին տրամադրված հիփոթեքային վարկերի վերաբերյալ տեղեկատվության (վարկային պայմանագրեր, վճարման ժամանակացույցեր և այլն) տրամադրումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) իրականացվելու է բանկի և նախարարության միջև կնքված համաձայնագրով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովելու նպատակով 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը.

2) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո ամսական պարբերականությամբ ապահովել հիփոթեքային վարկերի մարումները՝ վճարման ժամանակացույցերին համապատասխան.

3) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հիփոթեքային վարկերի մարման գործընթացը մեկնարկել 2025 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև դրանց ամբողջական մարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.08.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ